ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բան. գիտ. թեկն., դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանալի բառեր և արտահայտություններ. խմբագիր, քննադատ, եղեռն, գրական շաբաթաթերթ, գրական գործունեություն, սփյուռքահայ գրականություն, հայկական սփյուռք, հումանիզմ, թարգմանական գրականություն:

Ключевые слова и выражения: редактор, критик, геноцид, литературный еженедельник, литературная деятельность, литература армянской диаспоры, армянская диаспора, гуманизм, переводная литература.

Key words and expressions: editor, critic, genocide, literary weekly, literary activity, literature of the Armenian Diaspora, the Armenian Diaspora, humanism, translated literature.

Գուրգեն Մխիթարյանը ծնվել է **Շապին Գարահիսարում 1890 թվականի** այն օրերին, երբ **Թիֆլիսում** կազմավորվում էր **«Հայ Յեղափոխական Դաշնակցությունը»,** որի հետ էլ հետագայում անքակտելիորեն կապվում է հեղինակի գիտակից կյանքն ու գործունեությունը: **1907 թվականին «Մուշեղյան» վարժարանը** ավարտելուց հետո մի որոշ ժամանակ Մխիթարյանը աշխատում է որպես ուսուցիչ նույն վարժարանում, իսկ սահմանադրության հռչակումից հետո, **1908 թվականին, գնում է Պոլիս՝** ուսանելու **Կեդրոնական վարժարանում: 1912-ին** ավարտում է **Կեդրոնականը** և մինչև **Առաջին աշխարհամարտը** աշխատում է **Հայրիկյան վարժարանում՝** դասավանդելով **հայոց լեզու և գրականություն**, իսկ **Սիմոն Զավարյանի** մահից հետո նաև՝ **ընդհանուր պատմություն:**

Մտերմանալով **Սիմոն Զավարյանի և Շավարշ Միսաքյանի** հետ, **գրական-քննադատական հոդվածներով** աշխատակցում է նաև հայ մամուլի հսկային՝ **«Ազատամարտ»-ին՝** ցուցաբերելով իրական գրական արժեքների հայտնաբերման ու գնահատման լրջախոհությունը, որը ոչ միայն **Մխիթարյանի գրաքննադատական - հրապարակախոսական վաստակի,** այլ նաև ազգային - քաղաքական բեղմնավոր գործունեության բնորոշ առանձնահատկությունը դարձավ: Գուրգեն Մխիթարյանը հասունանում ու թրծվում **է «Ազատամարտի» շնչով՝ Սիմոն Զավարյանի և Շավարշ Միսաքյանի** մտերմության ու հոգածության մթնոլորտում:

Այս ժամանակահատվածում **Գուրգեն Մխիթարյանը** դառնում է նաև **Պոլսի Հ.Յ.Դ Ուսանողական Միության «Երկունք» ամսագրի** հիմնադիր խմբագիրներից մեկը՝ **Հմայակ Մանուկյանի, Կարո Սասունու և Լևոն Մոզյանի** հետ: 1914-ի սկզբին, որպես զինվորական սպա, կանչվում է օսմանյան բանակ: Մի որոշ ժամանակ ծառայելուց հետո հաջողում է փախչել ծառայությունից և պաշտոնավարում **Սկյուտարի «Քարե Դպրոց»-ում որպես տեսուչ,** որին զուգահեռ դասավանդում է նաև որպես ուսուցիչ: Մի քանի ամիս նորից աշխատում է **Կեդրոնականում որպես հսկիչ և դասախոս,** մինչև որ **1915 թվականի գարնան սկզբին** գտնում են հետքը և ուղարկում հետ՝ **Օրթագյուղի սպայական վարժարան՝ որպես գնդացրային բաժնի սպա:** Նա կրկին փախուստի է դիմում և թաքնված ապրում մինչև **1918 թվականի զինադադարը,** որից հետո էլ նվիրվում է եղեռնը վերապրող հայության կյանքը վերակազմակերպելու պայքարին: Զինադադարի ընթացքում աշխատում է որպես **«Ազատամարտի»** ժառանգորդ **«Ճակատամարտի» խմբագիր Շավարշ Միսաքյանի** կողքին՝ հիմնական ներդրումն ունենալով արևմտահայ գրականության ու թատերական մտքի վերզարթնման գործում: Երեք տարի շարունակ աշխատակցում է **«Ճակատամարտ»-ին՝** մեծ ժողովրդականություն գտնելով իր գրական-քննադատական հոդվածներով ու մանավանդ թատերական քննադատի իր հրապարակումներով, հետաքրքրություն ստեղծելով պոլսահայ բեմական արվեստի գործունեության ու դրամատուրգիայի շուրջ, ինչպես նաև դրսևորելով գեղարվեստական բարձր ճաշակ ու սրատես միտք: Հրավիրվում է նաև գրականություն, հայոց պատմություն և աշխարհագրություն դասավանդելու **Հինդլեանի**[1] հիմնադրած նոր դպրոցում, ինչպես նաև **Դպրոցասեր Տիկնանց Աղջկանց վարժարանում:**

---

[1] **Յովհաննես Հինդլեանը** ՀՄԸՄ-ի հիմնադիր սերունդի գործիչներից է: Ծնվել է 1866 թվականին: Նախնական ուսումը ստացել է Ներսիսյան, ապա՝ Պերպերյան վարժարաններում: Ազատ մարդու գաղափարաբանական իր առաքելությամբ Հինդլեանը մեծ ներդրում ունի 20-րդ դարասկիզբի տարագիր հայության զարթոնքի, սերնդակերտումի ու հայակերտումի պատվավոր գործում: Որպես ուսուցիչ դասավանդել է մի քանի վարժարաններում: Հովհաննես Հինդլեանն առաջինն է, որ Շավարշ Քրիսյանի «Մարմնամարզ» թերթում բացահայտում է սկաուտյան գաղափարի էությունը՝ դառնալով նրա գաղափարախոսը: 1913-ին Հինդլեանը կազմավորում է սկաուտական առաջին խումբը: Հինդլեանի ներդրումը մեծ է նաև նորաստեղծ կազմակերպությունը «Բարձրացիր՝ Բարձրացրու» նշանաբանով զինելու գործում: ՀՄԸՄ-ի հիմնադրությունից հետո նա դառնում է այդ միության գլխավոր հենարանը: Նոր սերնդի հայակերտման հիմնադիր Հինդլեանը մահացել է 1950 թվականի փետրվարի 6-ին:

Քեմալական շարժման և հայերի հալածանքի վերսկսման հետևանքով Պոլսում իր գոյությունը մի կերպ պահպանող մտավորականության վերջին բեկորների հետ **Գուրգեն Մխիթարյանը 1922 թվականին** վերջնականապես լքում է **Պոլիսը՝ հաստատվելով Կահիրեում, Եգիպտոսում: 1923-1924 թվականներին** ձեռնարկում է **«Նոր Շարժում» գրական շաբաթաթերթի** հրատարակությունը: Նա իր երիտասարդական եռանդն ու հոգեմտավոր կարողությունները ծառայեցնում է հայրենիքից տեղահան արևմտահայության ինքնության պահպանման ու ազգային գիտակցության, ինչպես նաև սփյուռքի ինքնակազմավորման գործին: Իր ողջ կյանքն ու հոգեմտավոր ներուժը **Գուրգեն Մխիթարյանը** նվիրաբերում է Սփյուռքի հավաքականության ու հայոց միասնականության կազմակերպման սրբազան պայքարին: Սերտորեն համագործակցելով **Վահան Նավասարդյանի** հետ, վերը նշված օրաթերթի պատասխանատու խմբագրի իր պաշտոնին կից, ձեռնարկում է նաև **«Հուսաբեր» օրաթերթի** հրատարակությունը և **Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, մինչև 1947 թվականի վերջը,** հաջողում է հրատարակել այն: **1947 թվականին,** որպես **հասարակական և կուսակցական գործիչ, Գուրգեն Մխիթարյանը** կարճ ժամանակ ապրում է **Իտալիայում,** իսկ **1948 թվականի փետրվարին տեղափոխվում է Միացյալ Նահանգներ: 1952-1962 թթ. Միացյալ Նահանգներում նա խմբագրում է «Հայրենիք» օրաթերթը՝** ստանձնելով նաև **Հ.Յ.Դ Արևելյան Ամերիկայի Կ.Կոմիտեի քարտուղարի պաշտոնը:**

Հայոց ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլի ավարտին, 1908 թվականի Օսմանյան սահմանադրության հռչակման ընթացքում կազմավորված սերնդից է **Գուրգեն Մխիթարյանը,** ով իր հասարակական գործունեությունը ծավալում է հայ մտքի, հատկապես՝ գրականության թռիչքների այն ժամանակահատվածում, երբ սփյուռքահայը պարտադրված էր ապրել նոր աշխարհի օրենքներով, երբ հայն այլևս բնիկ չէր, չուներ իր հայրենի հողը, գաղթական էր, և սոցիալ-քաղաքական նոր գոյավիճակը թելադրում էր նրան նոր կենսակերպ: Սփյուռք տարագրված հայ գրողները, ու նրանցից հետո էլ նոր սերունդը, **1920-1930-ական թթ սկզբնավորեցին սփյուռքահայ գրականությունը:** Գուրգեն Մխիթարյանը և սփյուռքի շատ ու շատ գրողներ **Հայաստանում կենտրոնանալու մեջ էին գտնում սփյուռքի փրկությունը:** Մայրենի լեզուն չմոռանալու, հայոց տարագիր զավակներին հայեցի կրթություն ու դաստիարակություն տալու, ինչպես նաև Հայաստանի նկատմամբ սեր ու հավատ ներշնչելու մեջ էր տեսնում **Գուրգեն Մխիթարյանը** ուծացման վտանգը դիմագրավելու գլխավոր պայմանը, քանի որ **սփյուռքահայ գրականությունը,** չնայած արևմտահայ գրականության հետ ունեցած **ներքին առնչություններին,** ձեռք

է բերում նոր հատկանիշներ՝ պայմանավորված նոր կենսապայմաններով: **Սփյուռքահայության այս նոր հոգեվիճակն** էլ գրականության տիրույթում փորձում էր կերպավորել ժամանակի հայ գրողը:

Գուրգեն Մխիթարյանը խմբագիր էր, քրոնիկագիր, գրադատ, դասախոս ու երեսփոխան: Գրականության մեջ զվարթախոհ չէր, սակայն կյանքում **կատակասեր էր ու սրամիտ:** Նա իր կյանքն ու հոգեմտավոր կարողությունները նվիրաբերում է հայ ժողովրդի տարագիր զավակներին՝ փրկելու և վերականգնելու ցեղասպանության մահացու հարվածներից: Օգնում է նրանց՝ հաղթահարելու առաջին աշխարհամարտի արհավիրքը, շնչող, ապրող ու զարգացող հավաքական գաղափարները վերածելով ազգապահպանության սրբազան պայքարի: **Կուսակցական ու հասարակական ակտիվ գործունեությանը զուգահեռ՝** խմբագրական աշխատանքը, սակայն, կլանում է **Գուրգեն Մխիթարյան քննադատին:** Նա չի կարողանում գրաքննադատության ու հրապարակագրության սահմանները հեռու պահել զգայական և խոհական զեղումներից, հասարակական և կուսակցական աշխատանքների ներգործությունից: **Միջկուսակցական բուռն պայքարների ժամանակ սկզբունքորեն** հեռու է պահում իրեն **կրքոտ բանավեճերից՝** փորձելով մնալ **որդեգրած արժեքների ու սկզբունքների հետևորդը,** սակայն **աստիճանաբար նահանջում է նրա ներսի արվեստագետն ու քննադատը:**

Ու թեպետ **Միացյալ Նահանգներում** ամեն բան բարեհաջող էր, այնուամենայնիվ, **Գուրգեն Մխիթարյանի՝** շուրջ **քառորդ դարյա գրական գործունեության կենտրոնը** մնում է **Կահիրեն, որտեղ և 1946 թվականին** տպագրում է **«Քառորդ դար գրականութիւն» (Դէմքեր և դիմաստուերներ)**[2] ընդհանուր խորագրով գրական-վերլուծական ժողովածուն՝ նրանում ամփոփելով հայ գրականության կարևորահույն դեմքերի՝ **Գրիգոր Զոհրապի, Հրանդի, Եղիշե Դուրյանի, Ավետիս Ահարոնյանի, Ինտրայի, Լևոն Շանթի, Վահրամ Փափազյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սևակի, Սիամանթոյի, Հովհաննես Զարիֆյանի, Մատթեոս Զարիֆյանի** և ուրիշ այլ հեղինակների կյանքն ու գործունեությունը: Անցյալն ու ներկան հավասարապես դարձնելով թեմա, ուծացման վտանգի դեմ կարևորելով ազգային ոգին բորբոք պահելու պայմանը, ստեղծելով հայ ոգու որոնման գրականությունը՝ **Գուրգեն Մխիթարյանը օգնում է սփյուռքահայ տարագրին՝ ճանաչելու իրեն, սեփական պատմությունը, գիտակցելու սեփական ինքնությունը, ազգային**

[2] Տե՛ս Գուրգէն Մխիթարեան, Քառորդ դար գրականութիւն // Դէմքեր և դիմաստուերներ, «Յուսաբեր», Գահիրէ, 1946, 401 էջ:

պատկանելությունը, և որ ամենակարևորն է՝ պահպանելու դրանք: Գուրգեն Մխիթարյանի հոդվածների և դիմանկարների սույն ժողովածուն ուշագրավ է նյութի ընդգրկման առումով: Այն բաղկացած է **երեք բաժիններից՝ «Դեմքեր եւ դիմաստուերներ», «Բանաստեղծներու հետ», «Նոր գիրքերու հետ»,** որոնց միջոցով գրականությանն ու գրի արվեստին առնչվող բազմաթիվ հարցերի պատասխաններ է տալիս հեղինակը: **«Ունիմ այն համոզումը, -գրքի առաջաբանում գրում է Գուրգեն Մխիթարյանը, - թէ անձերը աւելի կ՝արժեն, քան իրենց կատարած գործերը: Ինչ որ ալ ըլլան այս գործերը, հազիւ շուք մըն են անոնք գործիչներեն, ինչպես բացարձակ է պարագան Զոհրապի, Եղ. Դուրեանի, Ակնունիի եւ նմաններուն համար, որոնց կյանքին ու անձին հմայքէն ափ մը կամ գրեթէ ափ մը մոխիր միայն կը մնայ, քանի մը յուշք ու նշխար, թանկագին ու ոգեշունչ անշուշտ, բայց հեռու հրեղեն այդ խառնվածքներու փառքեն, անոնց փառավոր անձերէն ու կարելիութիւններեն»**[3]: Այնուհետև փորձում է հիմնավորել իր՝ վերը գրածը՝ **«Երկրորդ վկայութիւն մըն ալ այս հատորը՝ քառորդ դարու հայ գրականութեան մասին, քանի մը գրողներու եւ անոնց գործերուն վերլուծումով, վկայութիւն՝ հիներու մասին - արձակագիր կամ բանաստեղծ - որոնք կյանքեն դուրս են արդէն կամ ասպարէզին սահմանին վրայ, նորերու մասին, որոնք կրկեսին մէջն են, լիաշունչ ստեղծագործական պայքարի մէջ»**[4]:

Սփյուռքահայ գրականության գլխավոր թեման, ընդհանրապես, տարեգրության մեջ ապրող սփյուռքահայի ճակատագրի քննությունն է, անցյալի ու ներկայի, ջարդ ու աքսորի դժնդակ օրերի, երկրե երկիր թափառումների, օտար ափերում հացի խնդրի, ամենօրյա հոգեկան ու ազգային կորուստների պատմությունները: Գուրգեն Մխիթարյանը փորձում է մարդուն, մարդկայինը դիտարկել գրողի՝ այս դեպքում՝ անձի կամ գոյի՝ որպես իրական արժեքի, առաջնայնության տիրույթում, նրանց կատարած գործերը համարելով՝ **«ափ մը կամ գրեթէ ափ մը մոխիր միայն, քանի մը յուշք ու նշխար, թանկագին ու ոգեշունչ անշուշտ»:** Սույնը հանգամանք է, որով պայմանավորվում է **«Քառորդ դար գրականություն»** գրքի ոչ միայն կառուցվածքը, այլև ներքին բովանդակությունը, ուստի և հավակնում է դառնալու տվյալ ժամանակահատվածի գրական-մշակութային կյանքը առավել ճշմարտացի ըմբռնելու հիմքերից մեկը: Հոդվածների, դիմանկարների, գրախոսականների սույն ժողովածուով **Գուրգեն Մխիթարյանը փորձում է ամբողջացնել տարագիր ու անհայրենիք** (և ոչ

[3] Նույն տեղում, էջ 7:

[4] Նույն տեղում, էջ 8:

միայն) **գրողների կյանքը,** պատկերում է նրանց **գրական գործունեությունը** իրենց իսկ որդեգրած կարևորագույն իդեալների՝ **արդարության, առաքինության, հումանիզմի առանձնահատկությունների** ու նաև գրողի՝ **որպես մարդու, բարձրագույն հատկանիշների հաստատման հիմնական նախադրյալների տեսանկյունից:** «Քառորդ դար գրականություն» գրքի առաջաբանում **Գուրգեն Մխիթարյանը** խոսում է նաև իր՝ որպես հեղինակի, վաստակի մասին, հուսալով, թե՝ **«Հատորը մէկ մասը կը կազմէ քառորդ դարու գրական վաստակի մը: Անոր հեղինակը անհաղորդ է յաւակնութիւններու, բայց ունի այն սրտագին ենթադրութիւնը, թե այս էջերը կրնան հասնիլ մասնաւորապէս երիտասարդութեան, անոր մոտ խթանել ամենէն առաջ քննադատական միտքը, սէրը գրականութեան հանդէպ եւ հետաքրքրութիւնը մէր գրողներուն, անոնց գործերուն շուրջ»[5]:**

Իմաստուն մտքերը մարդուն այցելում են հատկապես ճամփորդությունների ժամանակ: **Գուրգեն Մխիթարյանի** մտահորիզոնն ու աշխարհաճանաչողությունը հարստացրել ու ընդարձակել է հատկապես **Երուսաղեմում շրջագայելը:** Այդ մասին գրառումներում նա բացահայտում է սեփական անձը նոր դիտանկյուններից և օգնում, որ ընթերցողը նույնպես պատկերացնի ու ընկալի աշխարհն իր հայացքով: **«...Կ՚ուզէի առանձին հատորով լոյս ընծայել Պաղեստինի եւ Կիպրոսի ուղեգրութիւններս»[6],-** մի առիթով իր թաքուն երազանքի մասին **Բենիամին Թաշյանին** պատմում է **Գուրգեն Մխիթարյանը,** ինչը, իհարկե, կենդանության օրոք նրա համար այսպես էլ մնում է երազանք և իրագործվում է միայն հեղինակի մահից չորս տարի անց, **1966 թվականին, հեղինակի տիկնոջ նախաձեռնությամբ, «Հերկ ու ցան»[7] խորագրով և Բենիամին Թաշյանի առաջաբանով:** Սույն գրքում տպագրվում են ոչ միայն Գուրգեն Մխիթարյանի ճամփորդական նոթերը, այլև գրական-հասարակական ու մշակութային տարբեր հարցադրումներով հոդվածների մի մասը:

«Հերկ ու ցան» Ժողովածուն բաղկացած է երկու՝ **«Տպավորություններ Պաղեստինեն» և «Հարցեր. մտածումներ. դեմքեր» բաժիններից:** Առաջին բաժինը՝ **«Տպավորություններ Պաղեստինեն»,** ընդգրկում է հեղինակի՝ **Երուսաղեմ կատարած ճանապարհորդությունը՝ ուխտավայրի աշխարհագրական դիրքի, բնակչության ապրելակերպի մանրամասնություններով:** Ճամփորդական այս նոթերում **Գուրգեն**

---

[5] Գուրգէն Մխիթարեան, Քառորդ դար գրականութիւն // Դէմքեր և դիմաստուերներ, «Յուսաբեր», Գահիրէ, 1946, էջ 8:

[6] Գուրգէն Մխիթարեան, Հերկ ու ցան, Պոսթըն, «Հայրենիք», 1966, էջ 1:

[7] Տե՛ս Գուրգէն Մխիթարեան, Հերկ ու ցան, Պոսթըն, «Հայրենիք», 1966, 196 էջ:

Մխիթարյանը կատարում է լրջագույն հարցադրումներ՝ իրապես տալով նաև դրանց պատասխանները: Իր ամբողջականության մեջ **«Տպավորություններ Պաղեստինեն»** բաժինը ըմբռնվում է **հոգեբանական ներքին դիտարկումների՝** «Քառասուն կոյսերու եկեղեցի», **կրոնական-ծիսական արարողությունների՝** «Դէպի Երուսաղէմ», «Երուսաղէմի մէջ», «Բեթլեհէմի մէջ», «Յովհաննու ծնունդ գիւղը», «Այն Քերիմի ռուսական վանքին մէջ», «Համբարձման լերան վերայ», «Լացի պատը», «Ս. Յարութեան տաճարը», **պատմական ու աշխարհագրական ընկալումների՝** «Յորդանան եւ Մեռեալ ծով», «Երիքովի մէջ», «Սողոմոնի տաճարը» ևն, որոնք, որպես լուրջ գիտելիքների աղբյուրներ, ընդգրկված են գրքի կառուցվածքային և իմաստային ընդհանրականության տիրույթում: Դրանք սոսկ տպավորություններ չեն, թեպետ հեղինակն այդպես է խորագրել, այլ **կարևորվում են փաստավավերագրական և մշակութաբանական ճշմարտացի և հարուստ նյութ դառնալու հատկանիշով:** Գրքի ուշագրավ պատումներից են հատկապես **հայոց պատմամշակութային արժեքների, կոթողների ու աշխահագրության** նկարագրությունները: **Հայկական միջավայրը ընդգրկող հատվածները** հաջորդում են միմյանց փոքրիկ ենթավերնագրերով՝ **«Հայոց վանքը», «Ս. Փրկիչի մէ», «Երկու այցելութիւններ», «Ս. Հրեշտակապետ եկեղեցին եւ հայ մայրապետները», «Ձեռագիրներու թանգարանը»** ևն:

«Իր փափաքին գոնե կէսը կիրագործուի այս հատորով, կը մնայ սակայն երկրորդ կէսը, որ նոյնքան գրականութիւն է, որքան գրական քննադատութիւն: Կը մնան դեռ գրական եւ արուեստի հարցերու մասին իր տեսութիւնները, երբեմն արագ ու հպանցիկ, բայց միշտ հետաքրքրական ու ինքնատիպ»[8], - գրում է **Բենիամին Թաշյանը** գրքի առաջաբանում: **«Հերկ ու ցան» գրքի երկրորդ բաժինը՝ «Հարցեր. մտածումներ. դեմքեր»,** ընդգրկում է **Գուրգեն Մխիթարյանի** քննադատական ժառանգության մի փոքրիկ հատվածը միայն: Այն բացվում է համանուն հոդվածով՝ **«Հարցեր. մտածումներ. դեմքեր»,** որում հեղինակը անդրադառնում է հատկապես արևմտահայ ու սփյուռքահայ գրականությունների ներքին միասնականությանը՝ մեկնաբանելով դրանք նոր հատկանիշների տեսանկյունից, միաժամանակ գտնելով, որ սոցիալ-քաղաքական նոր իրավիճակում այս երկու գոյությունները թելադրում են կենսապայքարի նոր

[8] Նույն տեղում, էջ 1:

ձևեր: **Գուրգեն Մխիթարյանը** իր ներդրումն ունի նաև **թարգմանական գրականության մեջ՝ Զուտերման**[9], **Զոլա, Կուպրին** կք:

1962 թվականի նոյեմբերի 25-ին Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքի հայաշատ **Ուստր արվարձանում, ՀՅԴ տարելիցի արարողության բանախոսությունը չավարտած՝ Գուրգեն Մխիթարյանը հանկարծամահ է լինում բեմի վրա:** Այդ ժամանակ նա դեռևս **«Հայրենիք» օրաթերթի** խմբագիրն էր: **«Պատնէշին վրայ մեռնիլ,- ասիկա ամենէն աւելի կը յարմարէր իր խառնուածքին»**[10]**,-** գրում է **Բենիամին Թաշյանը:** Իսկ ինքը՝ **Գուրգեն Մխիթարյանը, ԱՄՆ մեկնելուց առաջ,** ու նաև հետո, Բենիամին Թաշյանին գրում է՝ **«Մահուան մասին երբ կը մտածեմ, տեսակ մը դառնութիւն կը զգամ Արարիչին հանդեպ: Բայց կը մտածեմ նաեւ, թէ յաւիտենական չէ մահը, յաւիտենական է կեա՛նքը: Եւ ասիկա կը մխիթարէ զիս...»**[11]**:**

Ն. Համբարձումյան

Գուրգեն Մխիթարյան

Ամփոփում

Սույն աշխատանքն ամփոփում է Գուրգեն Մխիթարյանի՝ որպես գրողի, քննադատի, խմբագրի, ուսուցչի, կյանքն ու գրական գործունեությունը: Իր գրական-քննադատական հոդվածներով Մխիթարյանը որդեգրել է իրական գրական արժեքների հայտնաբերման ու գնահատման լրջախոհությունը, որը ոչ միայն նրա գրաքննադատական - հրապարակախոսական վաստակի, այլև ազգային - քաղաքական բեղմնավոր գործունեության բնորոշ առանձնահատկությունն է: Մեծ ժողովրդականություն գտնելով իր գրական-քննադատական հոդվածներով ու մանավանդ թատերական քննադատի իր հրապարակումներով, Մխիթարյանը մեծ հետաքրքրություն է ստեղծում պոլսահայ բեմական արվեստի ու դրամատուրգիայի շուրջ, ինչպես նաև դրսևորում է գեղարվեստական բարձր ճաշակ ու սրատես միտք: Նա իր եռանդն ու հոգեմտավոր կարողությունները ծառայեցնում է հայրենիքից տեղահան արևմտահայության ինքնության պահպանման, մայրենի լեզուն չմոռանալու, հայոց տարագիր զավակներին հայեցի կրթություն ու դաստիարակություն տալու, ազգային գիտակցության պահպանման,

---

[9] Տե՛ս Զուտերման, Լռած ջրաղացը, Գահիրէ, «Յուսաբեր», 1923: Թարգմ. Գուրգէն Մխիթարեանի:

[10] Գուրգէն Մխիթարեան, Հերկ ու ցան, Պոսթըն, «Հայրենիք», 1966, էջ 4:

[11] Նույն տեղում, էջ 4-5:

ուծացման վտանգին դիմագրավելու ինչպես նաև սփյուռքի ինքնակազմավորման գործին: Իր ողջ կյանքն ու հոգեմտավոր ներուժը Գուրգեն Մխիթարյանը նվիրաբերում է Սփյուռքի հավաքականության ու հայոց միասնականության կազմակերպման սրբազան պայքարին:

Н. Амбарцумян

Гурген Мхитарян

Резюме

Эта работа о жизни, творчестве и литературной деятельности писателя, критика, редактора, педагога Гургена Мхитаряна. В своих литературно-критических статьях Гурген Мхитарян принимает серьезность открытия и оценки реальных литературных ценностей, что характерно не только для его критического и публицистического опыта, но и является особенностью его продуктивной национально-политической деятельности. Обретя большую популярность в своих литературно-критических статьях и особенно в публикациях по театральной критике, Гурген Мхитарян проявляет большой интерес к драматургии армянского сценического искусства, а также демонстрирует высокий художественный вкус и острую мысль. Он использует свою энергию и духовность, чтобы помочь армянам, которым пришлось силой покинуть свои дома и родину, чтобы помочь сохранить идентичность изгнанных с родины западных армян. Он борется, обучает и воспитывает армянских детей, чтобы они не забывали свой родной язык, он борется за сохранения национального самосознания, духа и самоопределения армянской диаспоры. Всю свою жизнь и духовный потенциал Гурген Мхитарян посвящает священной борьбе за организацию единства армянской диаспоры.

N. Hambardzumyan

Gurgen Mkhitaryan.

Summary

This work summarizes the life, creative work and literary activity of Gurgen Mkhitaryan, the writer, critic, editor, and the teacher. In his literary and critical articles, Gurgen Mkhitaryan adopted the seriousness of discovering and evaluating real literary values, which is characteristic not only to his critical and journalistic experience, but is also a feature of his productive national and political activity. Having gained great popularity through his literary and critical articles, and especially in publications on theater criticism, Gurgen Mkhitaryan shows great interest in the dramaturgy of Armenian stage art, and also demonstrates a high

artistic taste and sharp thought. He uses his energy and spirituality to help the Armenians, who had been made to leave their homes and homeland, in order to maintain the identity of the Western Armenians expelled from their homeland. He fights, educates and trains Armenian children so that they do not forget their native language, he fights to save the national identity, spirit and self-determination of the Armenian diaspora. Gurgen Mkhitaryan devoted his entire life to the pan-Armenian unity and bringing together the Armenian diaspora.

Խմբագրություն է ուղարկվել 20.09.19
Հանձնարարվել է գրախոսության 28.09.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19